ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2026 թվականի N 818 - Ա

«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԿՈՆՑԵՍԻՈՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԳՈՒՅՔ ՀԱՆԵԼՈՒ, ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայկական երկաթուղու համակարգը «Ռուսական երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերության կողմից ստեղծված «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությանը փոխանցելու վերաբերյալ 2008 թ. փետրվարի 13 կոնցեսիոն պայմանագրին համապատասխան՝ թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ ընկերություն) փոխանցված կոնցեսիոն ակտիվների կազմից հանել Երևան քաղաքում գտնվող չշահագործվող 3 վագոնը (գույքահամարներ՝ 41010003 (743), 41010004 (տիպ BPB640), 41010006 (հ.188)) և սնուցող ագրեգատը (գույքահամար՝ 41010005)՝ գույքի (այսուհետ՝ գույք) ընդհանուր 876 100

ՀՀ դրամ սկզբնական և 0,0 ՀՀ դրամ մնացորդային արժեքով՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքը հետ վերցնել նախարարությունից և ամրացնել Պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ օտարելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում, ընկերության գլխավոր տնօրենի հետ համատեղ, ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո եռամսյա ժամկետում, կոմիտեի հետ համատեղ, ապահովել գույքի հանձնման աշխատանքների կատարումը:

4. Քաղաք Երևան, Արցախի 138 հասցեի հարևանությամբ «ԳՄՍ» պարկի գծերի վրա գտնվող գույքի ապամոնտաժման, տեղափոխման ծախսերն իրականացնել ձեռք բերողի հաշվին:

5. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով նշված աշխատանքների ավարտից հետո ապահովել գույքի հետագա տնօրինումը:

6. Մինչև 2026 թվականի հոկտեմբերի 1-ը գույքի պահպանման նկատմամբ վերահսկողության պատասխանատվությունը վերապահել ընկերությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

11.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ